б 583
К-70

25 SEP 2010



# ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ VII

## ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ

Երբ յերկու հիմնարկ-ձեռնարկներ, նախապես պայմանավորվելով, ստեղծում են փոխադարձ գնումներ և վճարումներ վորոշ ժամանակով և պայմաններով նրանք այդ գործառնությունները ձևակերպում են գրավոր, այսինքն բաց են անում համապատասխան հաշիվներ, ուր և գրանցում են կատարված փոխհարաբերությունները, ապա վորոշ ժամանակից հետո հաղորդում են իրար այդ մասին թե ով ում և վորքան ե պարտ մնում կամ պահանջ ունի։ Այս ձևի հաշվարկները կոչվում են կոնտոկորենտ ոպերացիաներ։

Փոխադարձ հաշվարկների թվին պատկանում են և ընթացիկ հաշիվները, վորոնք սակայն տարբերվում են նրանով, վոր տոկոսները հաշվվում են ավանդատուի օգտին։

Վորպեսզի պարտապանը ստիպված լինի փոխադարձ հաշիվներով մնացած պարտքը շուտափույթ լիկվիդացիայի յենթարկելու, պարտատերն իրեն հասանելիք գումարից պահանջում ե տոկոս, նկատի ունենալով այն, վոր յեթե պարտապանի վրա մնացած գումարը նա ժամանակին ստացած լիներ կդներ շրջանառության մեջ և վորոշ վաստակ կունենար։ Տոկոսների չափը վորոշվում ե կողմերի համաձայնությամբ և օրենքով նախատեսված սահմաններում։

Փոխադարձ հաշվարկների տևողությունը նայած գործի ծավալին և մեծությանը, կատարվում ե տարեկան մի քանի անգամ։ Տարվա վերջում, ըստ հնարավորության պետք ե աշխատել վերջնականապես փակել։

658
14 FEB 2013
25384

օր. 1

Մեր առևտրական հարաբերությունները պարզելու և տարեհաշիվը փակելու համար, խնդրում ենք անմիջապես ուղարկել մեզ մեր փոխադարձ հաշվարկների քաղվածքը։

օր. 2

Ուղարկելով մեր փոխադարձ հաշվարկների քաղվածքն առ 1-ն հոկտեմբեր ս. թ. մնացորդը ձեր օգտին

ռ. 305—10 կ.

Խնդրում ենք հաստատել քաղվածքի ճշտությունը։

օր. 3

Ի պատասխան ձեր ս. թ. 20 սեպտեմբերի № 200 գրության, հայտնում ենք ձեր կողմից ուղարկած քաղվածքի ճշտությունը մեր օգտին։

ռ. 305—10 կ.

Վորպիսի գումարը խնդրում ենք անմիջապես փոխադրել մեզ։

Փոխադարձ հաշվարկներում նկատված թերությունների, սխալ գրանցման և բացերի մասին կողմերը պարտավոր են իրազեկ դարձնելու միմյանց։ Հաճախ պատահում են դեպքեր յերբ հաշվարկների և հաշիվների ստուգման ժամանակ հայտնաբերվում են սխալներ գումարների մեջ, կամ բոլորովին չգրանցված գումարներ ի օգուտ մյուս կողմի։ Օգտվել նման հանգամանքներից միանգամայն անթույլատրելի յե։ Ամեն մի կոպեկ սխալի մասին անհրաժեշտ է հայտնել ում հարկն է, հակառակ դեպքում սխալներ ծածկող հիմնարկը կամ անձինք կորցնում են իրենց հավատարմությունը և զրկվում հետագա առևտրական արտոնություններից, իսկ սխալներ ծածկող անձինք յենթարկվում են պատասխանատվության։

---

## ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ VIII

# ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Գործի շտապողականությունն ու կարևորությունը շատ դեպքերում պահանջում է թղթակցել հեռագրի միջոցով։ Հեռագրական գործառնությունները առհասարակ հիմնարկության վրա թանգ են նստում, ուստի այդպիսով պետք է օգտվել ծայրահեղ դեպքում։ Յերբ փոստով ուղարկած նամակն ուշ տեղ հասնելով հիմնարկությունը կարող է կրել խոշոր վնասներ, օրինակ՝ շտապ պատվերներ տալու, կամ տրված պատվերների կասեցման, մուրհակների փրկագրման և այլ դեպքերում հեռագրով օգտվելը հանդիսանում է անհրաժեշտություն։

Հեռագրերը կազմվում են զանազան բովանդակությամբ ու տերմիններով։ Պետք է աշխատել հեռագիրը կազմել հասկանալի, գործածելով վորքան հնարավոր է քիչ բառեր։ Կան հեռագրական բովանդակություններ, վորոնք հասկանալի յեն միայն կողմերի համար։

Հեռագրերն ունեն յուրահատուկ ձև։ Հեռագիր ուղարկողը չի գրում իր լրիվ հասցեն, սակայն նա գրում է հիմնարկության կրճատ անունը՝ օրինակ «Հայկոոպ», «Լենբանկոոպ», «Գորնյակ» և այլն։ Ստորագրությունից առաջ բովանդակության վերջում գրվում է յելից հերթական համարը։ Հեռագրի վրա թիվ չի դրվում։ Հեռագրատունը հեռագիրն ընդունելիս դընում է շտամպ, վորը բովանդակում է իր մեջ վայրը, տարին, ամիսը և թիվը։ Հեռագրատունը հեռագրի վրա նշանակում է և ժամը։

Հասցեն (հեռագրի ստացողի) գրվում է կրճատ այնպես, վոր հեռագիրը հասնի ըստ պատկանելույն, օրինակ՝ «Յերևան Հայկոոպ», «Կենտրոնական Բանկոոպ», «Թիֆլիս Զակսայուզ» և այլն։ Ստորակետներ և այլ միացնող տառեր հեռագրի մեջ չի գրվում, շատ նախադասություններ փոխարինվում են կրճատ բառերով, օրինակ՝ «շտապ հեռագրեցեք» գրվում է «շտապեցեք», կամ «հեռագրեցեք» և այլն։

Պատասխան հեռագրերն սկսվում են «Ձեր 142», այսինքն «ի պատասխան ձեր № 142 հեռագրի»։ Հեռագրի բովանդակության մեջ յեղած թվերը լավ է գրել բառերով, ճիշտ է այդ ձևի հեռագրերը համեմատաբար թանգ են նստում, սակայն ապահով են ապագա թյուրիմացություններից ու թվերի աղավաղումներից։

### ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հեռագրական կանոնները բարդ չեն։ Այլ քաղաքներ ուղարկվելիք հեռագրերից փոստը ստանում է ամեն մի խոսքի համար 7 կոպ. և 15 կոպ. բլանկի համար։ Զանազան հասցեներով, սակայն միևնույն քաղաքը և միևնույն բովանդակությունն ունեցող հեռագրերից փոստն ստանում է նույն վճարը և 25-ական կոպ. ամեն մի առանձին պատճենի համար։ Կարելի յե ուղարկել և շտապ հեռագրեր։ Այդ դեպքում փոստն ստանում է վճար 3 անգամ ավելի։ Նման հեռագրերն ուղարկվում են անմիջապես և հերթից դուրս ու հանձնվում են նույնպես առաջին հերթին և շտապ կարգով։ Հեռագրերն ընդունելու համար փոստը ստացականներ չի տալիս, սակայն ցանկացողները կարող են պահանջել, վճարելով 5 կոպ.։



ԳՐԱԴԱՐԱՆ Гос Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им А Мяс...
36039. 62

Բաց նամակների համար վճարվում է 5 կոպեկ։
Տեղական բաց նամակներին—3 կոպ.։
Տեղական փակ նամակներին—5 կոպ.։
Հասարակ նամակներին դրսի քաղաքների—10 կոպ.։
Պատվիրված նամակներին 20 կոպ.։
Շտապ կարգով նամակների ծրարների վրա գրվում է «շտապ փոստով», որի համար փոստը ստանում է 75 կոպեկ։

---



# ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ

## ԱՌԵՎՏՐԱ-ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ

| | | |
|---|---|---|
| аванс | ավանս | կանխավճար |
| авария | ավարիա | նավագնացության ժամանակ կրած վնաս |
| авизо | ավիզո | հաղորդագիր (հաշվապահական) |
| агент | ագենտ | գործակալ |
| агентство | ագենտստվո | գործակալություն |
| администрация | ադմինիստրացիա | վարչություն |
| ажур | աժուր | առօր (օրվա գործերը նույն օրը գրքերում գրել) |
| аккредитив | ակկրեդիտիվ | դրամական կամ ապրանքային վարկ |
| акт | ակտ | արձանագրություն |
| актив | ակտիվ | 1. ներգործական, 2. հաշվեկշռի այն մասը, վորը պարունակում է ամբողջ գույքը կամ ունեցվածքը—արժեքները |
| акцепт | ակցեպտ | գրավոր համաձայնություն (մակագրություն) վճարման պարտավորությունը հանձն առնելու մասին |
| акция | ակցիա | բաժնետոմս |
| амортизация | ամորտիզացիա | չիջեցում, հանգցում գույքի արժեքի |
| анализ | անալիզ | վերլուծում |
| аннулировать | աննուլիրովատ | ի չիք հայտարարել, ջնջել, վոչնչացնել |
| ассортимент | ասսորտիմենտ | տեսակավոր (տեսակներ ապրանքի) |
| ассоциация | ասսոցիացիա | միություն-ընկերակցություն |
| баланс | բալանս | հաշվեկշիռ |
| биржа | բիրժա | բորսա (ապրանքային, վալյուտային) |
| бонус | բոնուս | վարձատրություն գնումներ կատարողին, յերբ վերջինս գնում է վորոշված քանակից ավելի ապրանք |
| брутто | բրուտտո | ապրանքի քաշը փաթեթի հետ միասին |
| вексель | վեկսել | մուրհակ |
| гарантия | գարանտիա | յերաշխիք, յերաշխավորություն |
| гросс | գրոսս | 12 դյուժին—144 հատ |
| дебет | դեբետ | պարտք (հաշվապահական տերմին, վոր նշանակում է «պարտ է» հակառակ կրեդիտ բառին, վոր նշանակում է ունի, կամ պահանջ) |

| | | |
|---|---|---|
| декрет | դեկրետ | օրենսդրական ակտ |
| делегация | դելեգացիա | պատգամավորություն |
| делькредере | դելկրեդերե | վարձատրություն գնորդին, երբ վերջինս ճշտորեն կատարում է իր պարտականությունները, վերցնելով իր վրա ապառիկ վաճառած ապրանքի գումարի գանձման պատասխանատվությունը |
| депеша | դեպեշա | հեռագիր |
| депо | դեպո | պահեստ ապրանքի |
| депозит | դեպոզիտ | ավանդ |
| депрессия | դեպրեսսիա | ճնշվածություն (առևտրի և արդյունաբերության) |
| дефект | դեֆեկտ | թերություն |
| дефицит | դեֆիցիտ | վնաս, պակաս, բաց |
| де-юре | դե-յուրե | իրավորեն, իրավապես |
| дивидент | դիվիդենտ | շահաբաժին |
| директива | դիրեկտիվ | հրահանգ, պատվեր |
| директор | դիրեկտոր | տնօրեն, կարգադրիչ |
| доверенность | դովերեննոստ | լիազորագիր, հավատարմագիր |
| документ | դոկումենտ | փաստաթուղթ |
| дотация | դոտացիա | նպաստավորում |
| дубликат | դուբլիկատ | կրկնակ |
| жиро | ժիրո | մակագիր, մակագրություն |
| задаток | զադատոկ | կանխավճար |
| залог | զալոգ | գրավական |
| импорт | իմպորտ | ներմուծում |
| инвентаризация | ինվենտարիզացիա | գույքի ցուցակագրում |
| инвентарь | ինվենտար | գույք |
| индекс | ինդեկս | գների ինդեկս—ցուցակ |
| индоссамент | իմդոսսամենտ | մուրհակի փոխանցում (տես ժիրո) |
| индустрия | ինդուստրիա | արդյունաբերություն |
| инициатива | ինիցիատիվա | նախաձեռնություն |
| инкассо | ինկասսո | մուրհակով, կամ այլ փաստաթղթով դրամի ստացում բանկի միջոցով |
| инструкция | ինստրուկցիա | հրահանգ |
| интерес | ինտերես | շահ |
| информация | ինֆորմացիա | տեղեկություն |
| калькуляция | կալկուլացիա | միավորի ինքնարժեքի որոշում |
| капитал | կապիտալ | դրամագլուխ |
| карт-бланш | կարտ-բլանշ | անսահման լիազորություն |
| квалификация | կվալիֆիկացիա | որակավորում |
| компенсация | կոմպենսացիա | փոխհատուցում |
| конкурс | կոնկուրս | մրցում |
| коносамент | կոնոսամենտ | նավի ապրանքային բեռնագիր |
| конто-корент | կոնտո-կորենտ | փոխադարձ հաշիվ |
| контролер | կոնտրոլյոր | վերահսկիչ |
| конфликт | կոնֆլիկտ | ընդհարում |
| конюктура | կոնյուկտուրա | պայմաններ, որոնք ազդում են տնտեսության գործնեության վրա |
| кооператив | կոոպերատիվ | համագործակցություն, միություն կամավոր սկզբունքով կազմակերպված |
| корреспондент | կորրեսպոնդենտ | թղթակից |
| котировка | կոտիրովկա | սակագրություն (գների որոշում) |
| крах | կրախ | սնանկություն |
| кредит | կրեդիտ | պահանջ (հաշվապ. տերմին, հակառակ դեբետի) |
| кредит | կրեդիտ | վարկ, պարտք, ապառիկ |
| кризис | կրիզիս | ճգնաժամ |
| купон | կուպոն | կտրոն |
| курс | կուրս | արժեգին |
| куртаж | կուրտաժ | միջնորդչեք |
| курьер | կուրեր | թղթատար |
| лекаж | լեկաժ | զեղչ հեղուկ ապրանքի կորստից |
| ликвидация | լիկվիդացիա | լուծարք |
| лимит | լիմիտ | սահման, չափ ապրանքի գնի—վարկեր |
| максимум | մաքսիմում | առավելագույն |
| мандат | մանդատ | վկայական |
| марка | մարկա | նշանագիր. նշան ապրանքի |
| милиоративн. ссуда | միլիորատիվ վարկ | պարարտացման վարկ |
| мемориал | մեմորիալ | հուշագիր |
| минимум | մինիմում | նվազագույն |
| монополия | մոնոպոլիա | մենաշնորհ |
| москательн. товар | մոսկատելնի ապրանք | ներկեղեն (ապրանք) |
| нагрузка | նագրուզկա | ծանրաբեռնում |
| накладная | նակլադնայա | բեռնագիր |
| наряад | նարյադ | կարգագիր, կարգախումբ |

| | | |
|---|---|---|
| начет | նաչյոտ | հաշվեպակաս |
| недовес | նեդովես | քաշի պակասորդ |
| нетто | նետտո | մաքուր քաշ, առանց փաթեթի—տարայի |
| неустойка | նեուստոյկա | տույժ |
| номбр | նոմբր | տոկոսային թիվ (դրամագլխի և օրերի թվի արտադրյալը բաժանած 100-ի վրա) |
| номенклатура | նոմենկլատուրա | անվանացուցակ |
| номер | նոմեր | համար |
| номинальная | նոմինալնայա | անվանական |
| норма | նորմա | նորմա (չափ) |
| нормальный | նորմալնի | բնական |
| нотариус | նոտարիուս | նոտար |
| облигация | օբլիգացիա | պարտատոմս |
| оккупация | օկուպացիա | գրավում յերկրամասի, գույքի |
| окладной сбор | օկլադնոյ սբոր | հարկադրելիք տուրք |
| операция | օպերացիա | 1. գործառնություն, 2. անդամահատում (բժշկ.) |
| опись | օպիս | ցուցակ, ցուցակագրություն |
| орган | օրգան | մարմին |
| ордер | օրդեր | հաշվ. գործարքների ձևակերպում, հրամանագիր վճարման կամ ստացման համար |
| оргинал | օրգինալ | բնագիր, իսկականը |
| орентировочно | օրենտիրովոչնո | մոտավոր |
| откуп | օտկուպ | փրկանք |
| отсрочка | օտսրոչկա | հետաձգում |
| отчет | օտչետ | հաշվետվություն |
| паевой капитал | պայեվոյ կապիտալ | փայադրամագլուխ |
| пай | պայ | փայ, մաս |
| паритет | պարիտետ | հավասարություն |
| партия | պարտիա | մաս (միատեսակ ապրանքի վորոշ քանակ) |
| пассив | պասսիվ | 1. տվյալ ձեռնարկության պարտքեր և թե զանազան դրամագլուխներ, 2. կրավորական |
| патент | պատենտ | արտոնագիր առևտրի |
| пенния | պեննիա | տույժ (վճարն ուշացնելու դեպքում) |
| переоценка | պերեօցենկա | վերագնահատում |
| период | պերիոդ | ժամանակաշրջան |
| периферия | պերիֆերիա | բաժանմունք, ճյուղ |
| перспектива | պերսպեկտիվա | հեռանկար |
| персонал | պերսոնալ | անձնակազմ |
| план | պլան | ծրագիր |
| полис | պոլիս | ապահովագիր (ապահովագրման համար տրված փաստաթուղթ) |
| порто | պորտո | փոխադրավճար (փոստի) |
| портфел | պորտֆել | թղթապանակ |
| пошлина | պոշլինա | մաքս, տուրք |
| прейс-курант | պրեյս-կուրանտ | սակացուցակ գների |
| премия | պրեմիա | մրցանակ |
| претензия | պրետենզիա | պահանջ, գանգատ, անբավականություն |
| пробный баланс | պրոբնի բալանս | փորձակշիռ |
| программа | պրոգրամմա | ծրագիր |
| прокат | պրոկատ | բանուգանդ (վճար մաշվելու-բանացնելու համար) |
| пролонгация | պրոլոնգացիա | տարկետում—հետաձգում |
| промилль | պրոմիլ | առ 1000 (0/00) հազարին |
| промисловый налог | պրոմիսլովիյ նալոգ | արհեստահարկ |
| просрочка | պրոսրոչկա | կետանցում (ժամանակի անցում) |
| протест | պրոտեստ | բողոք |
| протестовать | պրոտեստովատ | բողոքարկել |
| процедура | պրոցեդուրա | ձևականություն |
| процент | պրոցենտ | տոկոս |
| процесс | պրոցես | 1. վորևե գործողության աստիճանական զարգացում, 2 դատավարություն, դատական քննություն |
| пункт | պունկտ | կետ |
| рабат | ռաբատ | զեղչ (մեծաքանակ կամ կանխիկ ապրանք վաճառելիս) |
| разверстка | ռազվերստկա | բաշխում, մասնադրում |
| рассрочка | ռասսրոչկա | տարկետում-հետաձգում |
| радификация | ռատիֆիկացիա | վավերացում, հաստատում |
| рациональный | ռացիոնալնիյ | նպատակահարմար |
| реализация | ռեալիզացիա | վաճառք—մի կերպ սաղացնել, ծախել |
| реальный | ռեալնիյ | իրական |
| ревизия | ռեվիզիա | վերստուգում |
| регламент | ռեգլամենտ | կարգագիր (վորոշում ժողովի աշխատանքների կարգի մասին) |
| резерв | ռեզերվ | պահեստի, օժանդակ |
| резолюция | ռեզոլյուցիա | յեզրակացություն-մակագրություն |
| реклама | ռեկլամա | հայտարարություն ապրանքի վրա ուշադրություն գրավելու նպատակով |
| рекомендация | ռեկոմենդացիա | հանձնարարություն (հավանության կարծիք տալը) |

ремиссия / ռեմիսսիա — զեղչ հաշվեցուցակից (գումարը կլորացնելու համար)

рента / ռենտա — 1 պետական փոխառության տոկոսաբեր թղթերի մի տեսակը, 2. յեկամուտ դրամագլխից, վոր տըրվում է տոկոսով, 3. յեկամուտ գույքի օգտագործումից

репарация / ռեպարացիա — վնասների դարմանում (հատուցում). (միջազգ. բառ)

ресконтро / ռեսկոնտրո — անձնական հաշիվ (մատյան)

ресурс / ռեսուրս — միջոցներ, յեկամուտի աղբյուր

рефакция / ռեֆակցիա — զեղչ (ապրանքի վնասված լինելու դեպքում, կամ ապրանքը պայմանավորված հատկությանը չհամապատասխանելիս)

римесса / ռիմեսսա — գանձելի մուրհակ

риск / ռիսկ — վտանգն աչքի առնելը — սիրտ անել

рубрика / ռուբրիկա — սյունյակ, հատված (մատյաններում և հաշիվներում)

сальдо / սալդո — մնացորդ

сделка / սդելկա — գործարք

сдельный / սդելնի — գործարքային, հատավարձ

секция / սեկցիա — բաժանմունք, բաժին

серия / սերիա — կարգ

сертификат / սերտիֆիկատ — վավերագիր

симулянт / սիմուլյանտ — սուտ ձևանալ, սուտ հիվանդություն

синдикат / սինդիկատ — առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունների միություն, վորի նպատակն է կազմակերպել արտադրական գործվածքների վաճառք

синтекс / սինտեկս — խմբավորված գրանցումներ ըստ թղթակցող հաշիվների

сконто (дисконт) / սկոնտո (դիսկոնտ) — զեղչ արժեքից-գումարից (պայմանաժամից առաջ վճարելու համար)

смета / սմետա — նախահաշիվ

соло-вексель / սոլո վեկսել — սոլո-մուրհակ

сорт / սորտ — տեսակ

сартировка / սարտիրովկա — տեսակավորել

ссуда / սսուդա — փոխատվություն

стабилизация / ստաբիլիզացիա — կայունացում

стаж / ստաժ — բանվորության կամ ծառայության մեջ գտնվելու ժամանակամիջոցը

станпарт / ստանդարտ — 1. ապրանքի նորմալ հատկությունը, վոր բավարարում է նրա առաջադրած պահանջին, 2. անտառարդյունաբերության մեջ փայտեղենի չափ, 3 հաշվապահական բլանկների, քարտերի և այլ փաստաթղթերի անփոփոխ ու միանման ձև

статистика / ստատիստիկա — վիճակագրություն

стеногафия / ստենոգրաֆիա — սղագրություն

стопа / ստոպա — դզմա (թղթի)

сторно / ստորնո — ուղղիչ հոդված (հաշվապ. մեջ)



страховая премия / ստրախովայա պրեմիա — ապահովագին

субаренда / սուբարենդա — յենթավարձակալություն

субсидия / սուբսիդիա — նպաստ

табель / տաբել — ցուցակ բանվորների և ծառայողների

такса / տակսա — սակ (վորևե առարկայի-ապրանքի գին)

таксировка / տակսիրովկա — գնահատում, սակագրում

талон / տալոն — կտրոն

таможня / տամոժնյա — մաքսատուն

тантьема / տանտյեմա — շահաբաժին (լրացուցիչ վճար աշխատավորներին)

тара / տարա — տարա-փաթեթ

тариф / տարիֆ — սակագին

темп / տեմպ — թափ

тенденция / տենդենցիա — տրամադրություն, դիտավորություն

тираж / տիրաժ — հանույթ պետակ. պարտատոմս. խաղարկություն վիճակահանություն

тонна / տոննա — տոնն մետրական (1000 քլ = 6104821 փթի)

тоннаж / տոննաժ — նավի տարողություն

торг / տորգ — աճուրդ

традиция / տրադիցիա — սովորություն, ավանդություն

транзит / տրանզիտ — 1. մի յերկրից մյուսն ապրանք փոխադրելը յերրորդ յերկրի միջով, 2. ապրանքի ստացում և վաճառք առանց պահեստներով մուտք անելը

транспорт / տրանսպորտ — 1. փոխանցում, 2. փոխադրական միջոցներ (ֆուրգոն, սայլ և այլն)

трассат / տրասսատ — վճարող

трассант / տրասսանտ — փոխադրող

тратта / տրատտա — 1. վճարելի մուրհակ, 2. փոխադրական մուրհակ

трафарет / տրաֆարետ — 1. կաղապար, 2. դատայի վրա նշանակված ապրանքի քաշը

тресть / տրեստ — 1. արդյունաբերական ձեռնարկությունների միացում մի ընդհանուր վարչության ղեկավարությամբ և հատուկ հաստատված կանոնադրությամբ, վոր միացնում է ձեռնարկությունների ամբողջ արտադրական գործունեությունը, 2. ՍՍՀՄ-ում պետական տրեստը ազգայնացրած արդյունաբերական ձեռնարկությունների միացումն է, ինքնուրույն վարչությամբ, վոր գործում է հաստատված կանոնադրության հիմունքներով

тюк / տյուկ — հակ

уведомление / ուվեդոմլենիե — ազդարարագիր

учет (дисконт) / ուչյոտ (դիսկոնտ) — զեղչ, հաշվառում, учет векселя մուրհակի զեղչ

фактор / ֆակտոր — գործոն

фактура / ֆակտուրա — մեծ քանակությամբ ծախված ապրանքի հաշիվ

104 1 2 ՁՏ. 384

| | |
|---|---|
| фиктив<br>ֆիկտիվ | մտացածին |
| филиал<br>ֆիլիալ | բաժանմունք |
| фонды<br>ֆոնդի | արժեթղթեր |
| форс мажор<br>ֆորս մաժոր | անհաղթելի կամ գերազույն ուժ (վորն որինական պատճառ է հանդիսանում պայմանը չկատարելու) |
| франко<br>ֆրանկո | անվճար մինչև այսինչ տեղը (франко ст. Эривань, այսինքն ճանապարհածախսը մեզ վրա մինչև Յերևանի կայարանը) |
| фрахт<br>ֆրախտ | փոխադրողչեք |
| центнер<br>ցենտներ | 1000 քիլո |
| цех<br>ցեխ | արհեստամաս, համքարություն |
| циркуляр<br>ցիրկուլյար | շրջաբերական |
| чек<br>չեկ | վճարագիր |
| шанс<br>շանս | հաջողության աստիճան, հավանականություն |
| шантаж<br>շանտաժ | խաբեբայությամբ մեկից վորևե արժեք կորզելը |
| штат<br>շտատ | հաստիք |

| | |
|---|---|
| эквивалент<br>եկվիվալենտ | համարժեք |
| экономист<br>եկոնոմիստ | տնտեսագետ |
| экономика<br>եկոնոմիկա | տնտեսագիտություն |
| экономия<br>եկոնոմիա | տնտեսում |
| экспедитор<br>եքսպեդիտոր | առաքող |
| эксперт<br>եկսպերտ | փորձագետ |
| экспертиза<br>եքսպերտիզա | փորձագետների քննություն |
| эксплоатация<br>եկսպլոատացիա | կեղեքում, շահագործում |
| экспорт<br>եկսպորտ | արտահանություն |
| экспресс<br>եկսպրես | ճեպընթաց (գնացք) |
| эмиссионная цена<br>եմիսսիոննայա ցենա | եմիսիոն գին (թղթադրամի արժեքը այդպիսները բաց թողնելիս) |
| этикет<br>ետիկետ | ցուցագիր (ապրանքի վրայի ցուցանիշ) |
| ярд<br>յարդ | անգլ. յերկարության չափ, վոր հավասար է 0,9144 մետրի։ |

ՀՀ Ազգային գրադարան
NL0299423
ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР